

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀՐԷԱՆՆԵՐԻ ՊԱՆԳԽՏՈՒԹԻՒՆՆ ԱՐԵՒՄՏՔՈՒՄ:

ՀԷԼԼԵՆԻՆԻՆԻՐ. Ուրբ Գրայ Յաւարէն Լաւ Գաւառ Բիւնը.

(Շարունակութիւն. Արարտ Բ. Ե.)

Հրէաների արեւելեան պանդխտութիւնից զառնալով նորա արեւմտեան տարադրութեանը, մենք կընկնենք մի այլ բոլորովին տարբեր միջնորդութիւն: Այս տարադրութեանը մասնաւորապէս անձանց բոլոր մտաւոր ուղղութիւնը կատարեալ հակապատկեր է ներկայացնում նոցա արեւելեան եղբայրների բռնած ուղղութեանը, Չնայելով՝ որ այդ ուղղութիւնը շատ հակառակ էր նոցա չափազանց ազգայնական ոգուն, սակայն նա յառաջ եկաւ նոցանից բոլորովին անկասկածաւորութեամբ, Արեւելեան պանդխտութեան մէջ ծածկուած էր հրէութեան ապագան, իսկ արեւմտեանի մէջ (ընդհանրապէս խօսելով) — աշխարհի ապագան: Մէկը ներկայացնում էր Հին Կտայէլը, որ խարխալելով յիտ էր գնում դէպի անցեալը, միւսը նոր, երիտասարդ Կտայէլը, որ իւր բազումները կարկառում էր դէպի այն կողմը, որտեղից ծագելու էր նոր օրուայ արշալոյսը, Արեւմտքի այս հրէաները յայտնի են ընդ անուամբս հելլենականների, որ յունաց լեզուին ու սովորութիւններին յարուելու պատճառով այդպէս անուանուեցան:

Հրէական արեւմտեան համայնքը, որքան էլ որ ըստ կրօնականին և ըստ հասարակականին տարանջատ ապրէր, չէր կարող անշփոթ մնալ թէ՛ յունական քաղաքակրթութեան և թէ՛ նորա մտաւոր ազդեցութեան կողմից. նոյն իսկ իրերի բնական գրութիւնն այդ էր պահանջում: Նոյնպէս և յունաց աշխարհը չէր կարող գլխովին հեռացնել իրանից հրէական ազդեցութիւնը, թէ՛ և ժողովուրդն ատում՝ և յոյն բարձր դասակարգն արհամարհում էր նոցա: Նա այսպէս՝ այս երկու ազգութիւններն էլ փոխադարձաբար իրար վերայ ազդեցութիւն ունէին: Նայեցէք այստեղ հեթանոսների միջից հրէութիւնն ընդունողների քանակութեան վերայ. տեսէք թէ՛ այս երկիրն ի՞նչպէս պատրաստուած է ընդունելու այն փարդապետութիւնը, որ պէտք է ծագէր Յուդայի երկրում: Արեւմտքի հրէաները հեշտութեամբ ենթարկուած էին յոյների ազդեցութեանը զանազան պատճառներից ստիպուած: Նորա չունէին երկրաբանայ տեղական պատմութիւն և այնպէս հոծ մարմին չէին կազմում, որպէս նոցա արեւելեան եղբայրները:

Նոքա արհեստաւորներ, վաճառականներ, տոնարականներ էին, որ երբեմն այս, և երբեմն այն տեղ էին փոփոխում իրանց բնակութեան տեղին. նորա անհատներ էին, որ կարող էին միանալ և համայնք կազմել:

բայց մի որոշ ազգութիւն — ոչ երբէք: Այն ազգեցութիւնները, որոնց հրէան նշմարելիումէր Պաղեստինում և Բարեկաստանում և այն ամենը, ինչ որ նա տեսնում ու լսում էր իւր մանկութեան օրերից սկսած, սփուլումէին նորան բարբոսներին աշակերտել: Իսկ արեւմուտքում ամեն բան առաջնորդումէր նորան դէպի այն ծանապարհը, որ տանումէր դէպի հելլենականութիւն: Յունական մտաւոր զարգացման առաջ նա չէր կարող փակել իւր մտքը: Ինչպէս որ չէր կարող հետացնել իւր մարմինը միմեջութի ազգեցութիւնից:

Զանազան երկրներում տարածուած այժմեան շատ գաղթականների նման հրէաները բոլորն ցանկութիւն ու փափագ ունէին միշտ կապուած մեաւ իրանց հայրենիքի սովորութիւնների, ծէսերի և կրօնական սրբազան աւանդութիւնների հետ: Յոյների մէջ ապրող հրէան մերթ արհամարհանքով և մերթ անկեղծ ցաւակցութեամբ էր նայում իւր շուրջը կատարուող հեթանոսական ծիսակատարութեանց վերայ: Որոնց վերայից արդէն ի վաղուց Նսային բացել էր գեղապաճոյճ վարագոյրը, որ ցոյց տայ նորա տակը ծածկուած այլանդակութիւնն ու ունայնայնութիւնը: Նա բաց աչքով տեսնումէր յոյների հասարակական կեանքի, ուրեմն և մասնաւոր կեանքի ապականութիւնը, ազգային ժողովների, զուարճութիւնների ծանրութիւնն ու ունայնասիրութիւնը, կարճ ասած՝ հասարակութեան անդօրութիւնը՝ իւր բոլոր շրջաններում: Էրեւ — հելլենական գրականութիւնն անդամ ամենամօծ ատելութեամբ և անկեղծաւոր սրհամօրհանքով էր վերաբերվում դէպի հեթանոսութիւնը:

Յոյների մէջ ապրող հրէան այդ տեսարանից դառնումէր դէպի իւր սեպհական համայնքն անսահման բաւականութեամբ, որ տեսնի ու վնէկ նորա հոգեւոր լուսաւորութիւնն ու բացառիկ առանձնաշնորհութիւնները: (Պօղոս ստաբեալը Հոռոմայիցիներին գրած թղթի մէջ բաւականին լիակատար կերպով նկարագրումէ նոցա այս զգացմունքը): Յունական հրէան անցնելով հրաշակերտ և հոյաշէն բազմիւնների մօտից, գնումէր իւր համեստ ժողովարանը վստահ քայլերով: Ինչո՞ւ, վասն զի այստեղ միայն նորան շրջապատում էին միեւնոյն ծագումն, միեւնոյն հաւատքը և միեւնոյն անկեղծութիւնն ունեցող մարդիկ: Այստեղ շատ հաճոյական էր տեսնել, թէ ի՞նչպէս անդամների թիւն աւելանումէր այն անձանց թուով, որոնք ծագումով թէև հեթանոս սակայն իրանց գնացած ծանապարհի շեղութիւնը հասկանալով, հեզ ու խոնարհ մօտքով կանգնած էին «առ դրան եկելոց» իւր ողորմութիւն խնդրողներ և մուտք էին օրոնում դէպի Արրութիւնը: Արրատեղին — նա տեսնումէր և զգում, որ իւր ծէսերն ու օրինակատարութիւնները սուբր էին և Աստուածային ներշնչմամբ սահմանուած, այո՛, մօծ գանազանութիւն կար դոցա և շրջապատող անփառունակ սնահաւատութեան մէջ: Կարելի էր արդեօք այդ անձայն, անմիտ և աստուածանարգ հեթանոսական սպասառութիւնը համեմատել Արնազողի աստուածապաշտական սպասահարկութեան հետ: Նորա սրտանուշ երգեցողութեան,

նորա Աստուածաշունչ գրուածքների հետ, որոնք կրթութիւն հրէին առաքինութեամբ և բարեպաշտութեամբ:

Հարկ կայ արդեօք խօսիլ այտակ ժողովարանի մէջ ծագած « եղբայրական սիրոյ » մասին: Երբ ամենքին յայտնի էր, որ եթէ նորա մի անգամը չարչարուէր, ամենայն անգամ էլ չարչարանաց մէջ էր լինում և եթէ մի համայնքի վտանգ էր սպառնում, այդ վտանգը մասնատրվումէր և բոլոր մնացածներին: — Զօտարասիրութիւն մի՛ մոռանայք, զի այնու օմանք յանգէտ ընկալան զհրէշտակս », այս յորդորակը հանապազ կրկնելու քիչ կարիք էր մնացել: Օտարներին ընդունելութիւն ցոյց տալն ու ասպնջական լինիլը մինչև անգամ՝ մի մեծ առաքինութիւն էլ չէր համարվում: Այլ նա հեղինական տարագրութեան մէջ կրօնական կարիք ու պարտականութիւն էր համարվում: Գործք առաքելոց զբքից զիտներ, թէ ինչպիսի բորբոքեալ սիրով, ինչպիսի փափագով էին ընդունվում և ինչպիսի պատրաստականութեամբ և ուրախութեամբ էին հրաւիրվում հաւատոյ հայրենիքից գնացող բարբիներն ստուցիչները, և ինչո՞ւ: — Երպէս զի նոցանից լսեն « գրանս մխիթարութեան առ ժողովուրդն », Ամենայն ինչ, որ Արուստղէմից էր, ամենայն ինչ որ կարող էր նորա հետ ունեցած միաւորութեան կապը հաստատել անգնահատելի էր և շատ թանկագին: Այն տեղեկութիւնները, որ անուանվում էին « նամականիք ի Հրէաստանէ », կամ՝ այն լուրերը, որոնք տօնական ուխտագնացութիւնէց և կամ՝ ճանապարհորդութիւնից դառնալիս մէկը բերումէր իւր հետ — մօնուանդ եթէ գոքա վերաբերումէին այն աստղին, որ փայլելու էր արեւելեան երկնից կամարի վերայ — արագութեամբ տարածվում և հառնումէին հրէայ փերեզակին (չարչի), որ իւր շրջագայութեան միջոցին այլ նորութիւնները հաղորդումէր ամենահետադէմ և տարակաց ընտանիքներին, ուր գտնում էր նա շարաթական ողջոյն և շարաթական հանգիստ:

Իսկ երբ հրէան գուրս էր գալիս իւր համար բոլորադժած շրջանից, չորս կողմից իսկայն նորան շրջապատումէր հեղինականութիւնը — Ժողովրդական հրապարակի, փաճառանոցի, փողոցի վերայ հեղինական տարրը սփռուած էր: Կրպակներ, և ամեն բանի մէջ, ինչ որ ինքը տեսնումէր, ամեն անձի մէջ, որոնց հետ նա խօսումէր, երևումէր հեղինական տարր, որ շատ քնքշոյշ էր, շատ նազելի և յաւէտ գրաւիչ: Հրէան կարող էր հակառակ լինել նորան, բայց հետի փանել նորան իրանից — անգոր էր: Նոյն իսկ գիմնդրելու համար դեռ առաջ պէտքէ թողլ տուած լինէր նորան իրան մերձենալու: . . . Հրէայ բարբին պէտքէ ապացուցի դէմ ապացոյց ունենար իւր ձեռին, և այդ ոչ այնքան նոցա համար, որ հաւատ չունէին, որքան իւր համար, որ կատարելապէս համոզուած լինէր իւր սեպհական հաւատի մէջ, նա պէտքէ իւր հաւատը պաշտպանելու յոյժ ունենար ոչ միայն այլոց հետ վիճարանելիս, բանակառուի մէջ մտնելիս, որի մէջ անձնական պատուասիրութիւնը կարող էր ստիպել նորան հաստատուն և աներկ մնալ, այլ՝ ևս առաւել նա պէտքէ յոյժ զգար այն նշանաւոր պատերազմի մէջ, յորում մարդս երբեմն միայնակ իւր սեպհական մտքի գաղտնի հրապարակի վերայ հան-

դիպումէ հին հակառակամարտին և պէտքէ մենամարտի նորա հետ առանց
 արուք կողմնակի օգնականութեան։ Սակայն ինչո՞ւ համար խոյս տար վի-
 ճորանութիւնից, երբ նա հաւատացած էր, որ աստուածային ճշմարտու-
 թիւնն իւր հետ է, ուրեմն և յաղթութիւնն իւր կողմը։ Բայց ինչպէս որ
 ֆիզիքական հետազոտութիւնների միակողմանի եղբակացութեանց հետ ու-
 նեցած մեր ժամանակակից բնագիտութիւնների մէջ սովորել ենք ասել, թէ բը-
 նութեան ճշմարտութիւնները չեն կարող հակառակ լինել կրօնի ճշմարտու-
 թիւններին, որովհետեւ թէ սոքա և թէ նոքա ծագումն Աստուծոց, այն-
 պէս և հելլենականը ծիգն էր լմափում աստուածային յայտնութեան ճիշ-
 ժարտութիւնները հաշտեցնել այն ճշմարտութիւնների հետ, որոնք, ինչպէս
 ինքն էր ենթադրում, գտել էր հելլենականութեան մէջ։—Միայն մի քայլ
 էր մնացել, որ նա հելլենականութեանը մերձենայ և այդ կայանումէր նո-
 րանում, որ բացարձակ ճանաչուէր յունական մտքի արդիւնքը։ Յունական
 փիլիսոփայութիւնը հրէի բովանդակ ցեղական խելքն ու միտքը յափշտա-
 կել ու հզօր հիացման մէջ էր ձգել։ Բայց ամենից զօրեղապէս ազդողը՝ ա-
 մենայն տեղ թափանցող յունական լոյսիչ գրականութիւնն էր իւր բոլոր
 փայլով, յունական լուսաւորութիւնն ու քաղաքակրթութիւնը իւր փաղ-
 փաղուն և դրախշ յատկութիւններով։ Միով բանիւ այն ամենը, ինչ որ
 կարելի է անուանել «ժամանակի ոգի» իշխումէր թէ նորա մտքի, թէ խօս-
 քի և թէ գործերի վերայ։ Նորա իշխանութիւնը տարածւումէր մինչև Պա-
 ղեստին, և այդ զգումէին նոյն իսկ բարբոսական շրջաններում։ Պաղես-
 տինում գործածուող լեզուն խիստ դատապարտութեան էր ենթարկւում
 յոյների և լատինացիների կողմից՝ երբայական դարձածներ ունենալու
 համար, որ հաւանականաբար յատճ էր եկել նոր հանգամանքների պատ-
 ճառով և տիրապետող ու այնտեղ հաստատ բնակութիւն ունեցող օտարա-
 կանների հետ ունեցած յարաբերութիւնից։

Այ մի կարեւորութիւն չկայ ցոյց տալու, թէ որպիսի անյաղթելի դժուա-
 րութիւն կար բոլորովին մերժել յոյն լեզուի ուսումնասիրութիւնը կամ
 նորա հետ ծանօթանալը, քանի որ յունաց և հռոմայեցոց երկրից եկած
 օտարականների թիւը շատ մեծ էր, քանի որ Պաղեստինի կառավարիչները
 վաղնջուց անվերջանալի և յամառ պատերազմ էին սկսել նորան հելլենա-
 ցնելու համար և վերջապէս՝ քանի որ նոյն իսկ Պաղեստինի հողի վերայ
 հեթանոսական շատ հոյակապ ու գեղեցկաշէն մահաւանդ էին կանգնած։
 Նորան չէին կարող մերժել նորա համար, որ նա պատած էր այնպիսի շող-
 քով ու լուսով, որ հրէի խելքի ու մտքի վերայ առանձին շլացուցիչ ազդե-
 ցութիւն էր անում, և այս նոր գարթնող ու բզէիզներ արձակող բանա-
 սիրութիւնը ճնշելու համար խիստ միջոցներ էին հարկաւոր։ Երբ երիտա-
 սարդ բարքի Բէն-Բաման, որ մանրամասնաբար սերտել և իւրացել էր
 «օրէնքը», հարցրեց իւր քեռուն, թէ լոյլ կը տայ նա արդեօք, որ ինքն
 ուսումնասիրէ ու սովորի յունական փիլիսոփայութիւնը, ձերունի սարբին
 պատասխանեց նորան Նաւեայ որդու Յեսուայ խօսքերին նմանեցնելով իւր

խօսքերը. — « Գնա որոնիր, թէ այն ի՞նչ ժամ է, որ ո՛չ ցերեկին է պատկանում և ո՛չ գիշերին, եթէ գտար, այն ժամանակ միայն կարող ես սովորել յունական փիլիսոփայութիւնը » : Այդպիսի պատուէր էր տուել Աստուած Յեսուին յասելն իւր — « Եւ մի մերժիցես զգիր օրինացս այսոցիկ ի բերանոյ քումմէ, և խոկացիս ի դոսա ի տուէ և ի գիշերի, զի իմացիս անել զամենայն գրեալոգ ի դմա և ապա յաջողեսցիս և ուղղեսցիս զճանապարհս քո և ապա խելամուտ լինիցիս » : (Գլ. Ա. 8) : Այնու ամենայնիւ նոյն իսկ Գամաղիէլ Բ. քահանայապետը, որ շատ հաւանական է թէ Սաւուղ Տարսոնացու հետ (Պօղոս առաքեալ) գեղերուած էր առ ոտս պապին իւրոյ, պարապումէր յոյն լեզուի ուսումնասիրութեամբ (որպէս հաւատացնումէին), որովհետեւ շատ կետերում հետեւումէր այն ազատամիտ հայկացիներին, որ կապուած էին հելլենականութեան հետ : Աւանդութիւնն ի հարկէ արգարացնումէ նորան այն հիման վերայ, որ նա իւր բռնած գիրքին նայելով յարարերութիւն պէտք է ունենար կառեւարող վարչութեանց հետ և որպէս զի աւելի լաւ պաշտպան է նորան, այդ ձրգտումը վերագրումէ և աւագ Գամաղիէլին, թէ և առանց հիման, եթէ աչքի առաջ ունենանք այն հանգամանքը, որ իւր ձեռին ունենալով Յովբի մեկնութիւնը՝ արամէական լեզուով գրուած, նա այնքան սաստիկ վրդովուած էր նորա վնասակարութեամբ, որ խորը թաղել էր հողի մէջ :

Այս բոլորից երևումէ, որ տենդենցիա ձգտումն կար այդ բանին, թէ որպիսի խոր արմատներ էր ձգել նա, երևումէ այն փաստից, որ յունական փիլիսոփայութեան ուսանողների համար սուգանք կար նշանակած : Այդ ուսումը մեծ ուրբիններից մէկին ձգել էր ուրացութեան մէջ, նորան Թալմուդական գրութեանց մէջ նկարագրումն որպէս օտար, անհարազատ, « խորթացեալ » որին յանուանէ կոշիլ արժան էլ չէին համարում : Բայց նա դեռ չէր մերժուել ժողովարանից, երբ նորա շրթունքներն արտասանումէին « յունաց երգեր » : Իսկ ինչ կրկնաբարի հերետիկոսական գրքերի բազմութեանը, նորա բղիւնել էին նորա կրօնից այն ժամանակ, երբ նա գեռ աստուածարանական տկաղեմիայումն էր : Նոյն իսկ ճեմարանումն էլ արգելանաց ենթարկուեցան այդ գրքերը : Պարելի է թէ « հոմերեան գրքեր » խօսքերը, որ հանդիպումն ո՛չ միայն Թալմուդի այլ և Միշնայի մէջ, եթէ ոչ բացառապէս, գոնէ զլիաւորապէս վերաբերումէին կրօնական կամ կիսակրօնական հրէա-հելլենական գրականութեանը, որ ապոկրիֆներից (թագուցեալ, ծածկեալ, խորհրդաւոր գրքեր) դուրս էին : Սակայն նոցա յայտնուելն ապացոյց է, որ հելլենականներին թոյլ էր տրվում յունաց գրականութիւնն ուսանել և եթէ ո՛չ ուղղակի, գոնէ նոցա միջոցաւ Պաղեստինը ծանօթացաւ նորա հետ : Այս կարճատև նկարագիրը մեզ ճանապարհ է բաց անում, որ հելլենական գրականութեան մասին մի հարեանցի տեսութիւն անենք, որից հրէաները սաստիկ խորշումէին : Հապիւ թէ չափազանցութիւն համարուի, եթէ ասենք, որ նա կարեւոր էր ոչ միայն հելլենականների, այլ և ամբողջ աշխարհի համար : Մենք այստեղ ունենք նախ և առաջ Հին Ատակա-

բանի յունարէն թարգմանութիւնը որ յարցելի էր մշ միայն հետեւեալն պատճառով ալ և այն պատճառով որ Յիսուս Քրիստոսի ժամանակներում նա ամենանշանաւոր և վաւերական թարգմանութեան տեղ էր բռնում: Վասն որոյ և յաճախ Նոր Ատակարանի մէջ որպէս վերջութիւն նորանից կտորներ էր մէջ բերվում:

Նա ժողովրդական գիրք էր համարվում ոչ միայն հելլենացիների, ալ և Հրէաստանի և մինչև անդամ Գալիլիայի բնակիչների համար: Այդ ծագեց նորանից որ երբայցեոց լիզոն արդէն դադարել էր Պաղեստինում Ժողովրդական լիզոն լինելուց և մեկնութիւններն (տարգում) արգելուած էին: Աթէ յունարէն թարգմանութիւնն երկրի բոլոր բնակիչները չէին հասկանում գէթ քաղաքների բնակիչները հասկանում էին: հելլեն եղբայրները հեթանոսների հետ զրոյց անելիս նորանից էին վերջութիւններ բերում և վերջապէս նորան ձեռք բերելը և՛ հեշտ էր, և՛ յարմար: Իսկ այդ հանգամանքը շատ կարեւոր էր: Ս. Գրքի երբայրէն ձեռագրերն անհամեմատ թանկ էին որովհետեւ նոցա վերայ դործ դրած աշխատութիւնն ու հոգսը շատ մեծ էր: Այդ երեւումէ Թալմուդական այն հետաքրքիր նկատողութիւններից, ուր ասուած է թէ ոչխարի հասարակ վատ և աժան կաշուից շինած մի ծրարը որ լուսնագույն մէր սաղմոսների Յրքի և Առակաց գրքի մի մասը—արժէր 19 ստերլինգ այն է՝ 190) բուրլարձաթ, Թէև այս նկատողութիւնը վերաբերումէ Գ. և Գ. դարերին, սակայն չի կարելի կարծել, թէ երբայրէն ձեռագրերի գինը Յիսուս Քրիստոսի ժամանակ աւելի արժան եղած լինէր: Դորա համար էլ ձեռագրերն ամենի տեղահանութիւն չէին կարող լինիլ: Միւս կողմից մենք կարող ենք մի գաղափար կազմել յունարէն ձեռագրերի աժանութեան վերայ այն բանից որ միջ յայտնի է թէ Հոսովում գրքերն ինչ գին ունէին յրիստոնէութեան դարազլիսի սկզբներում: Հարիւրաւոր գերիներ դրումէին այն, ինչ որ մէկը թելադրում էր: Ասան որոյ ոչ միայն հրատարակվումէին այնպիսի մեծագիր հրատարակութիւններ, ինչպիսիք հրատարակվումն մեր օրերում ալ և նոքա հալիս կրկնապատիկ թանկ լինէին այն գրքերից, որ այժմ անուանվում են « աժան » կամ « ժողովրդական հրատարակութիւններ »: Աթէ ճիշտ հաշուենք, դուրս կը գայ որ այժմեան մանր տպի 16 երեսն այն ժամանակ կարող էր վաճառուիլ 25 կոպէկով և այդ յարաբերական համեմատութեամբ կարող էին վաճառուիլ ամեն մի գիրք: Այդ պատճառով լատիններէն և յունարէն գրուած ձեռագրները շատ հեշտութեամբ էին ձեռք բերվում: Ահա թէ ինչո՞ւ Հին Ատակարանի յունարէն թարգմանութիւնը դարձել էր ժողովրդական գիրք: Բացի դորանից մեծ ջանք էին անում այդ ժամանակ Պաղեստինի մէջ յունաց աղգեցութիւնը մուտք ունենայ. կար և մի ալ պատճառ, որ աւելի նշանաւորն էր դա Յունական կուսակցութեան գոյութիւնն էր:

Ինչպէս որ տարգումը *) Պաղեստինում ծագեց նորա բնակիչների պա-

(*) Տարգում (թարգում) քաղղէական բառ է եւ նշանակումէ մեկնութիւն, քաղատրութիւն, թարգմանութիւն:

Հանքին համաձայն, այնպէս և յունարէն թարգմանութիւնն անշուշտ յառաջ եկաւ հեղինականների զգալի պահանջին համաձայն, որովհետեւ նորատոհասարակ չը գիտէին երբայեցոց լեզուն։ Ահա թէ ինչո՞ւ Հնգամատների մի քանի մասերը վաղնջուց թարգմանուած էին։ Բացի դորանից ուրիշ պատճառ էլ կար.— Աւսումնականները՝ մանաւանդ Աղէքսանդրիայում՝ որ բազմաթիւ երբայեցի գաղթականներ կային, շատ բնական է, որ ցանկութիւն ունենային այն Ս. Գրքերի հետ ծանօթանալու, որոնց մէջ բովանդակվում էին Իօրայէլի կրօնն ու պատմութիւնը։ Այլ և պարտաւորինք ուշք դարձնել առաջին երեք Պաղոմեանց գրականական ճաշակի վերայ, որոնք Եգիպտոսում յաջորդեցին Աղէքսանդր Մեծին։ Այդ ժամանակ հրէաները բաւականին արտօնութիւններ էին ստացել, Պաղմէոս Ա. (Ղազսեան) գիտութեան և ուսման մեծ խնամակալ էր համարվում, նա գծեց Աղէքսանդրիոյ թանգարանի նախագիծը, որ գրականութեան և գիտութեան հայրենիք եղաւ և հիմնեց այդ քաղաքի մեծ և անուանի մատենադարանը *), Այս ձեռնարկութեանց մէջ նորա գլխաւոր խորհրդականն էր Դիմարի Փաղերէյոս, Առաջին Պաղոմէոսի շաւղին հետեւեց նորա որդի Պաղմէոս Բ. (Ֆիլադէլֆ ընկերասէր, եղբայրասէր), որ երկու տարի շարունակ նորա հետ իշխանութիւն էր վարում (286—284 ն. ք. Բ.), Այս թագաւորի գրամոլութիւնը վերին աստիճանի զարմանալի էր. հազուագիւտ ձեռագրերի

(*) Զարուստ հռովմայեցիները սովորաբար մատենադարաններ էին պահում. նոքա դրքերը կամ գրավածառներից էին գնում կամ առանձին գրագիրներ (լատ մեծի միտին ստրուկներ) նոցա համար ձեռագրեր էին արտագրում՝ նոցա տան մէջ, Այս մասնաւոր. բայց եւս առաւել հասարակական մատենադարաններից մի քանիսը շատ հարուստ էին։ Զորօրինակ Աղէքսանդրիոյ նշանաւոր մատենադարանը, որ վերջն՝ ինչպէս ասում են, Օմարը հօյ ճարակ գործրեց, 400,000 ից մինչեւ 700,000 հասոր դերը ունէր. — Բացի ձեթած կամ մամած տախտակների վերայ դրելուց, հռովմայեցիները գրում էին պտպիրուսի եւ մագաղաթի վերայ եւս գրում էին սեւաներկով (տուշ), գրուածը փաթաթում էին գլանի վերայ, ժապուխով կապում եւ կնքամամով կնքում էին, Պապիրուսը Աղէպտոսից՝ Աղէքսանդրիայից էր արտահանվում, դա եղեգնատեսակ բոյս է, երեք արշնաշտի բարձրութեամբ եւ մեծ քանակութեամբ բնութմէ Զրերի ծանծաղուտ տեղերում, Բուսի ստեղնը ծածկուած է մաշկի բազմաթիւ խաւերով, որ սրքան մօտենայ միջուկին, սյնքան կը քնքուշանայ ու կապիտակի, Հասած պապիրուսի խաւերը մէկը միւսից բաժանելով, տախտակի վերայ հարթում էին, մամուլի տակ չորացնում եւ յետոյ մի քանիսը միասին կպցնում իրար, իսկ ամենից վերջը՝ աւելի ամրացնելու եւ կարծրացնելու համար, հարթում էին փղոսկրով եւ իւղով օծում, Պապիրուսի գրած թերթերը ծալում էին խողովակաձեւ եւ պահում տրիդիկների մէջ, — Մագաղաթը (պերգամենա)՝ որ հնարեւ է Վւմէնը Պերգամի մէջ (քաղաք է) եւ իւր ամրութեան համար մինչ՝ և ցայժմ գործ է ածվում առանձին կարեւոր բաներ դրելու համար, պատրաստվում էր հորթի (կռի, ոչխարի եւ ուրիշ կենդանիների կաշուց, կաշին մաքրում են ճարպից, մօի կտորներից ու մաշերից, մօխրաջրում եփում, պաղլեղի Զրի մէջ թրջում, չորացնում, չրջանակի վերայ քաշելուց յետոյ հարթում, չորս կողմից ուղղում, կտրում, մամուլով ճնշում եւ յետոյ գործադրում են դրութեան համար։

Մ. Բ. Գ.

վերայ ծախսած գումարներն անհաւատալի են թուում մարդու: Մի և նոյնը կարելի է առել այս թագաւորներից երրորդի Պողոսէոս Գ-րդի մասին (էւէրգէտ): Ուրեմն քանի որ դժբա այդքան զրասէր էին, տարօրինակ բան կը լինէր, եթէ դժբա չաշխատէին խրեանց զրադարանը հարստացնել հրէից Ա. Գրքերով և կամ չը քաջալերէին այդ թարգմանութիւնն անողներին:

Յովսէփոսը պահել է մեզ համար Արիստէոս մէկի մի նամակը, (որ կեղծեալ են համարում)՝ գրուած իւր կղզայր Փիղոկրատին, որի մէջ ասուած է թէ Պողոսէոս Բ. իւր զրադարանապետ Գիմիտրի Փաղէրիոսի խորհրդին հետեւելով Արիստէոսի և ուրիշ աստիճանաւորների հետ նամակ ուղարկեց Արուսազէմի Աղիազար քահանայապետին՝ հետն էլ թանկագին ընծաներ, որ բացանելով կարգաց և եօթմանասուն երկու թարգմանիչներ ընտրեց—Իսրայէլի ամեն ցեղից վեց հոգի և տուեց նոցա Հին Ատակարանի թանկագին ձեռագիրներից մէկը, Այդ նամակը հաղորդում է և ուրիշ շատ մանրամասնութիւններ թէ եգիպտական արքունիքն ինչ հիանալի և փառաւոր ընդունելութիւն է արել թարգմանիչներին, թէ ինչպիսի ժամանակ են անցրել նոքա Փարոս կղզու վերայ, որ եօթմանասուն երկուսուր մէջ վերջացրել են խրեանց աշխատութիւնը և յետոյ դարձել են Արուսազէմ հարուստ ընծաներով, իսկ նոցա թարգմանութիւնը պաշտօնապէս հաւանութիւն է գտել Աղէքսանդրիւյ հրէաների ձերակուտի կողմից (Սինեգրիոն): Այս տեղեկութեանց վերայ հիմնուելով մենք կարող ենք հաւատալ հետեւեալ փաստին, թէ Հնգամատեանը—որովհետեւ միայն նորան է վերաբերում վկայութիւնը—յունարէն է թարգմանուել Գիմիտրի Փաղէրիոսի խնդրանք, եթէ ո՛չ Պրտղոմէոս Բ ի հրամանով, գէթ նորա թագաւորութեան ժամանակ և նորա հովանաւորութեան ներքոյ, Սորա հետ համաձայն են հրէից այն պատմութիւնները, որոնք նկարագրում են Հնգամատեանի թարգմանութիւնը Պողոսէոսի ժամանակ—Արուսազէմական Թալմուտը հասարակ պատմութեամբ, իսկ Բարեկականը յաւելւածներով, որոնք քաղուած են աղէքսանդրական աւանդական վէպերից *):

Հնգամատեանից յետոյ բնականաբար մի և նոյն վիճակին պէտք է նթարկուէին Հին Ատակարանի և միւս զրքերը: Մարդկանց այն դասը, որ կոչուած էր թարգմանութիւն անելու, այնպիսի անգամներից կարող էր կաշմուած լինիլ որ մի և նոյն գիտութեամբ և ընդունակութեամբ օժտուած չը լինէին, և իրօք Գանիէլ մարգարէի զրքի թարգմանութիւնն այնքան անկատար երևաց, որ նորա փոխարէն Թէոդոտիոնէս վերջն ուրիշը թարգմանեց: Ամբողջ թարգմանութիւնը եօթմանանից անունն է կրում իւր վերոյ, որպէս ենթադրումէին մի քանիսը թարգմանչաց թուից առնելով համաձայն Արիստէի ասածին, թէ և այդ զէպքում նա պէտք է անուանուէր եօ-

(*) Ո՞ր քանի մատենագիրներ կարծում են, թէ եբրայեցի գրիչները Պողոսէոսի համար՝ իբր լէէ՛ եբրայերէն բառերը միայն յունարէն տառերով էին գրել, որ իհարկէ ճիշտ չէ:

Թանասնից և երկուց՝ կամ Ազէքսանդրիոյ ծնունդութեան համաձայն՝ թէպէտ և այս դէպքումն էլ նա պէտք է եօթնասուն և մէկի անունը կրէր, Գուգէ նորա համար էին այդպէս անուանում, որ ժողովրդի կարծեաց համաձայն հեթանոս աղգերի թիւը եօթնասուն էր, որոնց ներկայացուցիչը յոյներն էին համարվում:

Եւ այսպէս եօթնասնից թարգմանութիւնը Հրէաստանի մէջ ժողովրդի հական գիրք դարձաւ, որտեղից քրիստոնէութիւնն իւր ժամանակին իւր խօսքն ու վարդապետութիւնը ուղղեց ամբողջ մարդկութեանը: Այս թարգմանութիւնը հեղինականների համար գրուած է համարվում աստուածային աղգմամբ այնպէս՝ ինչպէս նոյն իսկ բնագիրը:

Արդեօք եօթնասնից թարգմանութիւնը եղիպտական ժողովարաններում կարգացվում էր, արդեօք Աստուածապաշտութիւնն յունաց լեզուով էր կատարվում. ահա հարցեր, որոնց պատասխանը մի քիչ դժուար է գտնել. Սակայն մենք մի նկատողութիւն ենք գտնում այս մասին. թէ բարբարոսների լեզուով խօսողների մէջ ամբողջ տունջեան ընթերցուածները սովորաբար մի անձն էր կարդում. (բարբարոս անուանումէին ոչ—հրէին և գլխաւորապէս յոյներին), մինչդեռ երբայիւրէն խօսող հրէաների մէջ այդ բանը կարդումէին շատ անձներ, որոնք դաս առ դաս հրաւիրվում էին կարդալու: Գործնից կարելի է եզրակացնել, որ կամ միայն յունարէնն էր կարգացվում և կամ՝ հետեւումէր երբայիւրէն կարդալուց յետոյ, որպէս մեկնութիւն: Սակայն աւելի հաւանական է, որ միայն յունարէն օրինակն էր կարգացվում, քանի թէ երբայիւրէն ձեռագրերը և թէ նոյն կարգացողները հաղուսդիւտ էին: Յայտնի է, որ յունաց լեզուով թարգմանուած Ս. Գիրքը Պաղեստինի իշխանութեանց կողմից ընդունուած էր և ցերեկուայ սովորական աղօթքները թողլ էին տալիս յունարէն կարգալ *): Եօթնասնից թարգմանութիւնն այդ առաւելութիւնն ստացել է իւր ընդհանուր ճշտութեան և հին վարդապետութիւնը պահպանելու պատճառով: Միայն աւելի վերջին ժամանակներում ժողովարանի մէջ մի քանի ձայներ յայտարարեցին, թէ այս թարգմանութիւնն էլ հրէից աղգի համար այնպիսի մեծ դժբաղդութիւն է համարելու, որպէս ոսկէ հորթի շինելը և թէ նորան վերջացնելու ժամանակ սարսափելի նշան երեւցաւ երկնքում, — արեւ խաւարեցաւ երեք օր շարունակ, Սակայն Ագիպտոսում՝ Փարոս կղզու վերայ Եօթնասնից թարգմանութեան տարեդարձը կատարելու համար հանդիսաւոր տօն սահմանեցին, որին, ինչպէս կարծում են, մասնակցումէին նաեւ հեթանոսները:

ԱՐԶԱՐԱՆՈՒԹՅՈՒՆ:

Ս. Քաչ. Գեօնջեան:

(*) Շէման (Եբրայական հաւատոյ հանդանակը) իւր աղօթքներով, որ հնութիւններով եւ մեղիկաց աղօթքով յունարէն էին կատարուած, վերջին ժամանակներում մի ուսքի Շէմայի գործածութիւնն ի յոյն լեզու արդարացումէն այն պատճառով, որ այդ խօսքը ոչ միայն լսել, այլ եւ հասկանալ է նշանակում: